Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L 50
V 505

1881.

1999 Г

215

ԷԼՖՕՐԴԻ ԴՈՎԷ

№ 3

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԵՐԿՈՒ ՄԱՆՐԱՎԷՊ

(Լրիւս պրան № 2) Մէլիքշէհի ընծան)

ԹՈՒՐՔ.

Տ. Է.

Լեռ
505

Տպարան Մ. Մահսանի Յակոբեան։

ՇՈՒՇԻ

18 84

ԷԼՖՕՐԴԻ ԴՈՎԷ

43931-Կ.Հ.

(ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆԱՑ ՆԱԶԱՐԵԱՆ)

ԵՐԿՈՒ ՄԱՆՐԱՎԷՊ

ԱԼՖՈՆՍ ԴՈԴԷԻՑ

1) Լրտես պատն և 2) Մելի-Շինի ընծան։

ԹԱՐԳ.

ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

№ III

1881

ՇՈՒՇԻ

Տպ. Մ. Մահտեսի-Յակոբեան։

Z/143.

28020-62

„Մշակ" տպագրի Մ. Մուգ-
դուսի-ի հրատարակիր Ց. Ցուրիկյանի
Հրամանաւ ներքոյ Հրատարակեալ է։
Ցանց։ 12/24 81

Дозволено Цензурою 3-го Марта
1881 года г. Тифлисъ

Типографія М. Мугдуси-Акопова.

Հ.Ֆ. 505 505-ao

պատնէշները, որոնց վրա փը-
ռուած էին թաց լաթեր և ո-
լորուն ձխնելոյզներ, որոնք կար-
ծես, կամէին բարձրանալ առա-
ւօտուայ թանձր մշուշի միջից։
Ներքեմն պատահում էին երե-
խաներին և վերարկուի մէջ փա-
թաթուած հարիւրապետներ,
որոնք հեռադիտակներով դի-
տում էին շրջակայքը. այստեղ-
այնտեղ երևում էին վրաններ,
որոնց վրա նստել էր թանձր
ձիւնի շերտ, որ հալվում էր
խարոյկի թոյլ կրակից։ Մեծ
տղան գիտէր ճանապարհը և
գնում էր դաշտով. պահակնե-

ին չ'հանդիպելու համար. բայց չ'նայելով արած պտոյտներին՝ այնու-ամենայնիւ նրանք պա-տահեցին մի խումբ կամաւոր հրաձիգներին. դրանք իրենց կարճ թիկնանոցների մէջ փա-թաթուած թաղ էին կացել ջրով լիքը խրամների մէջ, որոնք ընկած էին Սուանսօնի երկա-թուղուն զուգընթաց: Այդ-ան-գամ զուր՝ բարձրահասակն աշ-խատեց ի-գործ-դնել իւր սո-վորական լացը, վասն-զի հրա-ձիգները չ'էին կամենում նրանց բաց թողնել, բայց մինչդեռ նա լաց էր լինում, սահմանագլխի

վրայի գտնուած տնակից դուրս եկաւ մի ալեզարդ կնճռոտած ծերունի, որ շատ նման էր Ստեն-նի հօրը. դա տատնապետ էր, —"Դե՞հ, պստի՛կ, բաւական է լաց լինես, ասաց նա եթե-խաններին,—ձեզ թող կ'անեն գնալ զետնախնձորի. բայց ա-ռաջ մտէք մի քիչ տաքացէք, ահա այդ մանկիկը բոլորովին սառել է,,:

Այա՛ղ փոքրիկ Ստենը դողում էր ոչ թէ ցրտից, այլ վախից, ամօթից.....:

Պահականոցում նրանք մի քանի զինուորներ տեսան, որոնք

280 20-62 12/431

ՊԵՏ. ԿԱՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
ZUUՌ
Ա. ԱՄ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

կրակի շուրջը նստած տաքացնում էին իրենց չոր հացը սուինները քաշած։ Երեխաներին տեսնելով նրանք յետ կացան տեղ տալու համար. յետոյ առաջարկեցին սուրճ. երբ երեխաները սուրճը խմեցին, դռանը երևաց մի հարիւրապետ, որ կանչեց տաննապետին, մի քիչ հետը կամաց-կամաց խօսեց և ապա արագ հեռացաւ։

—"Տղերք, ասաց տաննապետը, այս գիշեր ,,շոգ,, կը լինի..... Մենք լմացել ենք պրուսացիների ,,անցախօսը,,. կարծում եմ մեզ կ'յաջողվի առ-

նել այս անգամ նրանցից այդ անիծած Բուռժէն։

Մի րոպէում լուռեցան աղաղակ, ծիծաղ. սկսեցին պարել և երգել, սրել սուինները. իսկ երեխաները օգուտ քաղելով այդ աղմուկից և իրարանցումից՝ շուտով դուրս գնացին։

Խրամի այն կողմը ուղիղ դաշտ էր ու հեռուն երկար բարակ պատ հրածգումեան ծագերով։ Դէպի այդ պատն էր և նրանց ճանապարհը. ժամանակ առ ժամանակ նրանք կանգ էին առնում ձևի համար, իբր թէ զեռնախնձոր են հաւա-

քում։

—"Յետ դառնանք, չգնանք այնտեղ, ասաց փոքրիկ Ստեփանը. այդ խօսքին վրա նրա ընկերը ուսերը թափ տուաւ և գնացին յառաջ։

Յանկարծ նրանք լսեցին որ իրենց մօտերը մի տեղ հրացաններ էին լցնում։

—"Պարկի՛ր," ասաց բարձրահասակը գետնի վրա ընկնելով։ Նա գետնի վրա սիռուեց և շուացրաւ. նրան պատասխանեց մի ուրիշ շուռց. յետոյ դարձեալ ձիւնի վրայից սուրալով նրանք յառաջ գնացին։ Պատի առաջ գետնի

հետ հաւասար՝ երեւացին նախ տեղին կոշտ քստմնած քեղեր և յետոյ իւղոտած կաշէգտակներ։

Բարձրահասակը ցատկեց խրամով և կանգնեց պրուսացիների մօտ։ "Այդ իմ կըրտսեր եղբայրն է, ասաց նա, ցոյց տալով Ստեփանին։

Ստեփանը այնպէս փոքր էր, որ պրուսացին նրան տեսնելով՝ խնդաց և պատնէշի բացուածքով անց-կացնելու համար՝ առաւ գըրկեց նրան։

Պատի միւս կողմով ընկած էին մեծ-մեծ հողակոյտեր, դի-

զուած էր կըտրտուած ցախ, իսկ ձիւնի մէջ շինած սև ծաղերից՝ դուրս պրծած էին էլի այն տեղին քստմնած բեղերը և խղոտած կաշէգդակները։

Պրուսացիները ծիծաղում էին տեսնելով անցնող տղաներին։ Մի քիչ հեռուն գըտնվում էր այդպիսի տունը, մեծ ծառերով շրջապատած։ Նրա նելքին յարկի մէջ բնակում էին զինուորներ, որոնք թուղթ էին խաղում և մի և նոյն ժամանակ արգանակ էին եփում վառվռուն այրուող կրակի վրա։ Նրանց արգանակից կաղամբի և ճրա-

գուի լաւ հոտ էր գալիս. պրուսացւոց բնակարանները զանազանվում էին կամաւոր հրաձիգների բնակարաններից։ Տնակի վերևում ապրում էին հարիւրապետներ. այնտեղից լսվում էր դաշնամուրի ձայն և շոմպայն գինու շիշերի խցանների տրաքոցը։

Երբ Փարիզեցւոց տեսին՝ ուրախական ‘‘ուրա,, պոռային. ապա երեխաներից լրտիրները առնելով՝ առաջարկեցին նրանց գինի ու ստիպեցին պատմել ու զանազան լուրեր հաղորդել։ Ներկայ եղող հա-

ռիւրապետները աչքի էին զարնվում իրենց զոռոզ դէմքով և բարկացած կերպարանքով, բայց բարձրահասակ տղան զուարճացնում էր նրանց փողոցական կատակներով և իւր օտարոտի բառաբառով։ Նրանք ծիծաղում էին կրկնելով նրա խօսքերը և ուրախութեամբ խորասուզվել էին այդ փարիզական կեղտոտութեանց մէջ, որոնց նրանք բերել էին ինչպէս նորութիւններ։ Փոքրիկ Ստեննը նոյնպէս ուզում էր խօսել և ցոյց տալ՝ որ ինքն էլ չէ յիմար, բայց կարծես մի բան նրա լեզուն կապում էր։

Ստեննի դիմաց կանգնած էր մի խմբակապետ, որ միւսներից մեծ էր և զգօն. ձեռին բռնած էր մի լրագիր և ձևացնում էր իբր թէ կարդում է. այլ իսկապէս նա աչքը ուղիղ ծգել էր փոքրիկ Ստեննի աչքին. նրա նայուածքում կար և քնքշութիւն և յանդիմանութիւն։ Այսպէս՝ նա մտաբերում էր իւր որդուն որ զրկանվում էր իւր հեռու հայրենիքում և որ մի և նոյն Ստեննի հասակին էր. կարծես՝ նա ինքն իրեն ասում լինէր.—"Այս աւելի լաւ կ'համարէի մեռնել քան

թէ տեսնել իմ որդուն այդպի-
սի կեղտոտ գործի ետևից ըն-
կած։,,

Այդ վայրկենից Ստեփանը
ըզգաց, որ մէկի ծանր ձեռը
ընկել է նրա սրտի վրա և չէ
թողել տալիս որ բաբախի։

Այդ զգացմունքից ազա-
տուելու համար՝ Ստեփանը սկսեց
խմել. շուտով ամեն բան նրա
աչքում շուռ եկաւ. նա լսում
էր՝ իբր թէ երազում բարձրա-
գոչ-ծիծաղ-խնդումի մէջ՝ իւր
ընկերը ծաղրում էր ազգային
զօրքերը, նրանց կրթութիւնը
նոյնպէս գիշերային ,,զար-

թիքը,,* պատնէշների վրա։ Բայց
ահա յանկարծ նա ցածացնում
էր ձայնը, հարիւրապետները
մօտենում էին նրան և նրանց
տեսքերը ծանր կերպարանք էին
ընդունում։

Անպիտան տղան պատրաս-
տուեց մատնել, որ կամաւոր
հրաձիգները պիտի յարձակում
անեն։..

Այդ ժամանակ փոքրիկ
Ստեփանը ասես ցնցուեց և կա-
տաղեց։

—,,Պէտք չէ,,—ասում էր
նա բարձրահասակին,—,,այդ չի

(* ,,զարթիքը,, тревога.

ուզիլ, ես չկամիմ...,, ընկերը միայն խնդաց նրա վրան և շարունակեց պատմել։

Հազիւ նա վերջացրաւ իւր խօսքը, բոլոր հարիւրապետները ելան տեղերից և նրանցից մինը երեխաներին մատնացոյց անելով դէպի դուռը՝ ասաց.

,,Դուրս կորէք,,.

Հարիւրապետները սկսեցին շատ շուտ-շուտ խօսել իրար հետ գերմաներէն. բարձրահասակ տղան դուրս եկաւ գոռոզ-գոռոզ՝ ճրնկճրնկացնելով իւր դրամները. իսկ Ստենը գլուխը կախ արած հետևում

էր նրան։ Անցնելով այն հարիւրապետի մօտով, որի նայուածքից նա այնպէս նեղւում էր, լսում էր մի տխուր ձայն, որ ասում էր,—լաւ չէ, այդ լաւ բան չէ.—Ստենի աչքերը լցուեցան արտասուքով։

Երեխաները պինտ վազելով դաշտով շուտով տուն հասան. մի պարկ կետնախնձորով անարգել անցան կամաւոր հրաձիգների պատնէշը, ուր պատրաստութիւն էին տեսնում գիշերային յարձակում անելու. զօրքերը լուռ անցնում էին և խրմբվում պատերի ետևը։

Ծ՝ներ տաճնապետը նոյն-
պէս այդ տեղ էր. նա տեղա-
ւորել էր իւր գինուորներին և
դէմքից բոլորովին գոհ և բախ-
տաւոր էր թւում. երբ երեխա-
ները անցան՝ նա բարեսրտու-
թեամբ ժպտաց նրանց հետևից։

Ո՜հ, այդ որչա՜փ ցաւ և տան-
ջանք պատճառեց փոքրիկ Ստեն-
նին. նա ուզում էր կանչել՝ մի՛
գնաք այնտեղ, մենք ձեզ վա-
ճառել ենք....բայց ընկերը ա-
սաց նրան. "Եթէ դու կ'խօ-
սես, իսկոյն մեզ հրացանով կը
սպանեն,,. նա վախից բռնուեց։

Կուռնէվի մէջ նրանք մը-

տան մի դատարկ տուն և բա-
ժանեցին փողը. այստեղ ես
պէտք է ասեմ, որ փողի բա-
ժանումը շիտակ եղաւ և երբ
փոքրիկ Ստենը լսեց իւր գը-
պանում զրնկզրնկացող փողե-
րի ձայնը և մտածեց յառաջի-
կայ խաղերի վրա՝ էլ այնքան
սարսափելի չէր համարում իւր
յանցանքը, բայց երբ բարձրա-
հասակը հեռացաւ, այն ժամա-
նակ նրան թուաց, իբր թէ
իւր գրպանները ծանրացել էին
և ձեռքը՝ որ սեղմում էր իւր
սիրտը՝ սկսեց աւելի ևս ճնշել.
նրա աչքին Փարիզը փոխուել

էր, էլ այն չէր. անցորդները նայում էին նրա վրա՝ իբր թէ զիտէին, որ տեղից է նա գալիս։ ‘‘Լրատես,, բառը նա լսում էր ամեն տեղ. և անիւների չըխչըխկոցում, և զարնուող թմբուկի ձայնում՝ ջրանցքի ափի վրա, ուր զինուորական կրթութիւններ էին լինում...։ Վերջապէս նա տուն վերադարձաւ և հանգիստ եղաւ՝ երբ տեսաւ, որ հայրը տանը չէր։ Շուտ բարձրացաւ իւր սենեակը և բարձի տակ ծածկեց դրամները, որոնք այնքան տանջում էին նրան։ Ստեննի հայրը ոչ երբէք այնքան ուրախ չէր եղել՝ ինչպէս այդ երեկոյեան։ Դաւառներից եկած լուրերը հաղորդում էին, որ երկրի գործերը լաւ են ընթանում, ընթրիքի ժամանակ ծեր զինուորը նայելով դէպի իւր հրացանը՝ որը պատից կախ տրած էր՝ ասաց իւր որդուն բարեմիտ ժպիտով,

—‘‘Ը՜հ, տղա՛ս, եթէ մեծ լինէիր՝ դու էլ կ՚գնայիր պրուսացւոց դէմ։

Ութ ժամին որոտած թընդանօթը։

—‘‘Դրանք Օբերվիլցիք.... են, կռվում են Ռուռժէում,‘‘ ա-

սաց բարի ծերունին, որ Փարիզին շրջապատող բոլոր ամրոցները գիտէր՝ ինչպէս իւր հինգ մատը։

Ստեննի գոյնը թռաւ և յոգնած ձեւանալով գնաց պարկեց անկողնում։ Բայց չկարողացաւ քնել, թնդանօթը շարունակում էր գոռալ։ Նրա աչքի առաջն էր գալիս՝ ինչպէս կամաւոր հրաձիգները գնում են որ յարձակուեն պրուսացիների վրա, սակայն ընդհակառակը իրենք են ընկնում դարանի մէջ....։

Յետոյ նա յիշեց այն խըմբակապետին, որ ժպտացել էր

իւր երեսին. նա տեսնում էր նրան արիւնաթաթախ, սփռուած ձիւնի վրա և նրա մօտ ընկած կային ուրիշ շատերը....։

Դրանց բոլորի արեան գինը թաղցրած էր նրա բարձի տակ և այդ բանն արել էր Ստեննի-գինուորի որդին.... արտասուքը նրան խեղտեց։ Նա լսում էր որ կից սենեակում շրջում էր իւր հայրը. հրապարակում թմբուկ էին զարնում գինուորներին գումարելու համար։

Գունդը պատրաստվում էր կռիւ գնալու. ճշմարիտ, այդ իսկ

կոիւ էր։

Խեղճ տղան չէր կարողանում լացը բռնել։

—"Այդ ի՞նչ է,, հարցրաւ հայրը. որդին չ'համբերեց, ցատկեց անկողնից և ընկաւ հօր ոտները։ Նա մի շարժումով բոլոր դրամները թափեց յատակի վրա։

—,,Այդ ի՞նչ փողեր են, գողացե՞լ ես", ասաց Ծերունին բոլոր մարմնով դողալով։

Այն-ժամ միանգամից՝ առանց շունչ քաշելու, փոքրիկ Ստեփանը պատմեց բոլոր պատահածը. ինչքան նա խօսում էր՝

այնքան սիրտը թեթևանում էր. խոստովանուիլը նրան հանգստացրաւ. Ծերունին սարսափով լսում էր նրան և երբ մեղանչումը վերջացաւ՝ ծածկեց երեսը ձեռներով և սկսեց լաց լինել։

—"Հայր, հայր," ուզում էր խօսել որդին, բայց հայրը նրան յետ հրեց՝ առանց պատասխանելու և հաւաքեց դրամները գետնից։

—"Այդ բոլորը փողե՞ր են,, հարցրաւ նա։

Որդին գլուխը խոնարհեց, այ՛ո, ասելու տեղ։

Ծերունին վեր առնելով հրացանը պատից և գնդակակիրը ու դնելով փողերը գրպանում ասաց.—"Լա՛ւ, այս փողերը ես կ՚վերադարձնեմ պրուսացիներին,,:.....

Եւ առանց այլ ևս մի բառ արտասանելու և ոչ իսկ երեսը դարձնելու դէպի այն կողմը, ուր կանգնած էր Ստեննը՝—իջաւ փողոց, խառնուեց կռիւ գնացող քաղաքապահ գունտի մէջ: Այդ ժամանակից ի՞վեր էլ ոչ ոք Ստեննին չ՚տեսաւ:

1880 թ. 7-էն Սեպտեմբերի, Շ՚ուշ

ՄԵԼԻՒԶԻՆԻ ԸՆԾԱՆ

ԱԼՖՈՆՍ ԴՕԴԷ

II

ՄԵԼԻՍԻՆԻ ԸՆԾՈՒՆ
(ԱԼՖՈՆՍ ԴՈԴԷ)

Գարուն էր. գարուն խաղաղ, տաք, ծոխ և պայծառ գարուն։ Փարիզ քաղաքը, պաշարման ժամանակի սարսափներից և ներքին պատերազմներից՝ շատ-քիչ կարգի ընկած, դարձել էր իւր առաջուայ կեանքին և գործունէութեանը։ Փողոցներում սկսեցին երևալ կառքեր և անց ու դարձ անողներ. գործարաններում անիւները թրն-

դացին և արուեստանոցներում լսուեց զանազան մեքենաների աղաղակը. աղքատները դարձան իրենց զբաղմունքին, իսկ հարուստները իրենց խնջոյքներին:

Մի փոքրիկ սենեակում, որ գտնվում էր Փարիզի ամենաբազմամարդ թաղի մի մեծ նրբամեջ քարեկիր տան տանիքում՝ կատարուեց մինը այն առօրեայ կենցաղական տխուր անցքերից որոնք բոլորովին աննկատ անցնում են ի-միջի այն հրեշաւոր երևոյթներին, որոնք գերում են հասարակութեան ուշադրու-

թիւնը:

Կտաւագործ Յակոբ-Ռիշարին եօթներորդ երեխայ ծնաւ. հարուստ ընտանիքներում ամեն մի նոր անդամի երևալը բոլորի համար ուրախալի դէպք է, բայց աղքատների համար այդպէս չէ. դրանց համար ամեն մի նոր անդամը՝ աւելորդ...բերան է, որին պէտք է կերակրել. այդ պատճառաւ երեխայի ծննունդը բերում է իր հետ տխրութիւն, ծանր և վատ նախազգացմունք և մաշող հոգս:

Այդ տեսակ հոգսերի և անձկութեան զգացմունքով՝

խեղճ Ռիշարի ընտանիքը ընդունեց նորածին Ռոբեր մանկան, որ եօթներորդն էր իւր կարգին մէջ։

Վերջին ժամանակների գործ չլինելը և տիկին Մաղէնի երկարատև հիւանդութիւնը՝ բոլորովին քամեցին այդ ընտանիքի առանց էն էլ աղքատ միջոցները։

Զուր էր Ժաք-Ռիշարը ամբողջ օրեր աշխատում գործարանում, զուր նրա երկու աղջիկները՝ Փրանսինա և Լիզետա, որոնցից մեծը հազիւ տասն և հինգ տարեկան էր, գնում

էին գործարան՝ շերամի կոկոնները թելի հանելու, զուր հայրը իւր տասն-երկու-ամեայ Ժանին և մետասան-ամեայ Գաբրիէլին տուել էր պղնձագործին աշկերտութեան, զուր էր այդ ամենը, որովհետև՝ այդու-ամենայնիւ, դժուար էր մի ընտանիքին ապրել, որ բաղկացած էր՝—հօրից, մօրից, երկուօրեակ վեց-վեց տարեկան աղջիկներից, որոնք տանն էին ճաշում։ արդ, հասկանալի է, թէ ինչու նոր անդամի աշխարհ գալու պատճառաւ՝ ակամայ երկիւղ և սարսափ զգաց Ռիշարի ընտանիքը։

Ժապ-Ուիշարը սոված և յոգնած տուն դառնալով՝ մինչև անգամ չ'նայեց նորածին մանկան վրա. բարկացած մի անէծք կարդաց իւր բախտին, որ ղբրկել էր այս չ'խնդրած ընծան և իւր իւղոտած գտակը աչքերը քաշելով՝ տխրութեամբ տանից դուրս եկաւ, որպէս զի իրեն նման մի աղքատ ընկերից պարտք անէ գոնէ մի քիչ փող՝ այդ անակընկալ դէպքի առիթով: Երկու երկտրեակ աղջիկները սենեակի մի անկիւնում ընկած կեղտոտ շորերով՝ խաղում էին լոսուած,

կոտրտած փայտէ խաղալիկով՝ այնպէս հանդարտ ինչպէս կարող են խաղալ միայն շատ աղքատ երեխաները: Սրանց դուռնատ, հիւանդոտ երեսների վրա փայլում էր միայն տարակուսութիւն և հետաքրքրութիւն խառն երկիւղով:

Իսկ խեղճ մայրը հիւանդութիւնից և ոյժից վեր աշխատութիւնից մաշուած և թուլացած, լռութեամբ և համբերութեամբ պարկած էր խոտէ տոշակի վրան և ծածկուած հին չիթէ վերմակով. նրա բարակ դեղձան մաղերը, որոնց մէջ

տեղ-տեղ արդէն երևում էին ճերմակները, թափուած էին բարձի վրայով և բոլոր նրա հոգնած, վաղժամանակեայ ծերացած երեսը փայլում էր համբերութեամբ, հպատակութեամբ. նրա մեծ կապոյտ աչքերը, որոնք ծանր աշխատանքից կորցրել էին իրենց առաջուայ փայլը, շատ անգամ անձկութեամբ և սիրով դառնում էին դէպի նորածինը, որ պարկած էր իւր մօտ:

Մանուկն էր հիւանդոտ, նիհար և կարծես թաղնուած լինէր վախից լաթերի մէջ և

ներողութիւն խնդրելիս կեանքից, որ ինքը համարձակուել է պատասխանել նրա հրաւէրին, կարծես նա զղում է, որ ինքը անկոչ հիւր էր ընտանիքի մէջ ու կ'լինի անկոչ հիւր և հասարակութեան մէջ: Նրա մանրիկ ձեռները հուի էին եկած, նրա շրթունքները արտայայտում էին երկիւղ, ցաւ, փաղաքշանք, իսկ նրա մեծ, կապոյտ աչքերը՝ ինչպէս այն աստերի ուեհանը, որոնց մէջ մեծացել էր Մադելինան,—բացուած էին մի տեսակ երկչոտ նայուածքով:

Մօր սիրտը կտրատվում էր հիւանդագին անձկութեամբ, երբ նայում էր այդ թոյլ, տկար էակի վրան, որին սպասում էր այնպիսի ծանր կեանք և ժամանակ-առ-ժամանակ նրա հիւանդ, ոյժից ընկած թերթևունքները փակվում էին և նա ընկնում էր տենդային մոռացութեան մէջ։

Բայց եթէ ընտանիքը և հասարակութիւնը անտարբերութեամբ մինչև անգամ անհիւրասէր և դժկամակ կերպով դիմաւորեցին Թոմբեր մանկան աշխարհ գալը, սակայն պայծառ, գարնան արևի ճառագայթը, որ իւր կեանքում անթիւ ցաւերի ականատես է եղել, մտիկ է արել իւր ընթացքում և խրճիթների և պալատների մէջ,—ուրիշ կերպ նայեց գործի վրան. նա խեղճ անտիրական մանկան վրա քաղցրութեամբ նայեց պատուհանի միջից և լուսաւորեց իւր ճաճանչով նորածինի գլուխը։

Եւ ահա պայծառ արևի ճառագայթից բաժանուեց կամ գուցե սուրաց մի փոքրիկ ոգի՝ եռանդունեան զգեստով, փայլուն սև աչքերով, ճառագաթ-

ների պսակ գլխին և շողշողուն գաւազան ձեռին։ Կամաց, զգուշութեամբ մտաւ ոգին աղքատիկ բնակարանը և հանդարտ քայլերով մօտեցաւ նորածին մանկան։ Նա և մայրը միայն նկատեցին նրա մօտենալը։ Մանկիկը քնքշութեամբ ժպտաց և վստահութեամբ մեկնեց ձեռները դէպի անծանօթը, իսկ մայրը, որ վարժած էր երկարատև փորձով, երկիւղով բացաւ իւր հոգնած աչքերը և վախվախելով հարցրաւ. ‘‘ո՞վ ես դու,,

— ‘‘Ես եմ Մելիւզինան, պատասխանեց ոգին. ես

եմ մինը Ֆրանսիական ոգիներից,,. ապա վշտալի ժպիտով նայելով հիւանդ և մաշուած մօր երեսին աւելացրաւ կամաց ձայնով. ‘‘Ա՜հ աղ, ես չեմ կարող տալ քո զաւակին ոչ հարստութիւն, ոչ զօրութիւն. ես ինքս կորցրել եմ իմ դիւթական իշխանութիւնը, բայց ես կ՚տամ նրան հաւատ դէպի մարդկութիւնը, հաւատ դէպի հայրենիքը, հաւատ դէպի իւր սեպհական ոյժերը.— այն հաւատը, որ փրկում է մարդկանց, որ փրկում է մարդկութիւնը, ես կ՚տամ նրան այն հաւատն ու սէրը, որ

ստեղծում է գործողներ, շար-
ժող ոյժեր,,։

Ոգու իմաստուն խօսքերը
չհասկացաւ ցաւերով և աշխա-
տանքով բթացած ուղեղ մայ-
ը. տխուր ժպիտ անցաւ նրա
շրթունքների վրայով և ծան-
ր բացած թերթևունքները փա-
կուեցան։

Բայց նորածին մանուկը՝
ինչպէս երևում էր, լաւ հաս-
կացաւ Մելիւզինի իմաստուն
խօսքերը և երբ նա իւր գաւա-
զանով դիպաւ իւր մանկական
ճակատին և շրթունքներին, այն
ժամանակ նրա կապոյտ աչքե-

ը պայծառացին համարձակ,
յոտակ փայլով և շրթունքնե-
ի վրան երևաց զուարթ ժը-
պիտ։

Սենեկի ներսը առաջուան
պէս խաղաղացաւ։ երեխաները
խաղում էին մէկ անկիւնում։
մաշուած մայրը հոգնածութիւ-
նից խոր քուն մտաւ, խեղճ ման-
կիկը նոյնպէս քնեց և միայն
նրա պստիկ բերանի վրա ուրտա-
փայլող հրճուալից և զուարթ
ժպիտն էր վկայում, որ նրան
այցելել է մինը Ֆրանսիական
ոգիներից։

1880 թ. 4-ին Նոյեմբերի, Շ[illegible]։

ՄԵՐՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՔ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. „Քնար Լուսնակ գլխնիէ 50 կ.
2. „Պոզնանի Ուսուցչի օրագրից„ Լիտվոսի պատմածը . . . . . 20 կ.
3. „Երկու մանրավէպ„ Սէֆոնս Դոդէ . . . . . 15 կ.

„Ծաղիկ և ծաղկահատութիւն„ գին. 15 կ.

Մեր հասցէն.

ШУША.

Тиграну Назарьянъ

ՀՀ Ազգային գրադարան
NL0115174